



**ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ**  
**ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏ**

ՀՀ, Երևան, 0025, Ալեք Մանուկյան 1 • Республика Армения, Ереван, 0025, Алека Манукяна 1 • 1 Alex Manoogian, 0025, Yerevan, Republic of Armenia  
(+374 60) 71-00-92, info@armin.am, www.armin.am, www.yసు.am

№ 2/2015 « 27 » մայիս 2015 թ.

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ №2/2015**

**ԵՊՀ ՀԱՅԱԳԻՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ՝  
2015Թ. ՄԱՅԻՄԻ 27-ԻՆ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԹԻՎ 2 ՆԻՍՏԻ**

**Նիստին ներկա էին գիտական խորհրդի 27 (քսանյոթ) անդամներից 23-ը (քսաներեք):  
Նիստը նախագահում էր ռեկտորը, ՀՀԻ տնօրեն Ա. Հ. Միմոնյանը:**

Ռեկտոր Ա. Հ. Միմոնյանը, բացելով գիտական խորհրդի նիստը, հայտարարեց քվեակազմի առկայության մասին և քվեարկության դրեց նիստի օրակարգը.

1. Դոնի Ռոստովի Հայագիտական կենտրոնի տնօրեն պ.գ.թ. Սերգեյ Սայադովի «У истоков русского арменоведения: историографический обзор» և «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. Часть 1» գրքերի՝ գիտական և հետաքրքրվող այլ մասաներին ներկայացնելու հարց:
2. 2015 թ. ՀՀԻ մասնակցությունը «ԵՊՀ Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ» միջոցառումներին:
3. Ընթացիկ այլ հարցեր:

**Գիտխորհրդի անդամների կողմից օրակարգի համար այլ հարց չառաջարկվեց և մասնակիցների բաց քվեարկությամբ ընդունվեց նիստի օրակարգը:**

1. **Լսեցին.** Դոնի Ռոստովի Հայագիտական կենտրոնի տնօրեն պ.գ.թ. Սերգեյ Սայադովի 2015 թ. հրատարած գրքերի՝ գիտական և հետաքրքրվող այլ մասաներին ներկայացնելու հարցի շուրջ:

**Որոշեցին.** – Հունիս ամսին կազմակերպել «У истоков русского арменоведения: историографический обзор» և «Собрание актов, относящихся к обозрению истории армянского народа. Часть 1» գրքերի շնորհանդեսը ԵՊՀ Հայագիտական հետազոտությունների ինստիտուտում:

2. **Լսեցին.** ՀՀԻ մասնակցությունը «ԵՊՀ Հայոց ցեղասպանության 100-ամյակին ընդառաջ» միջոցառումներին (Զեկուցող՝ ՀՀԻ փոխտնօրեն Միկել Հովհաննիսյան):

**Որոշեցին.** – Իրականացնել «Հայոց ցեղասպանության պատմական, միջազգային, իրավական, մշակութային և արվեստի հիմնահարցերը» խորագրով ներհամալսարանական գիտաժողով:

**Գիտական խորհրդի նախագահ՝**

**Ա. Հ. Մինոնյան**

**Գիտական խորհրդի քարտուղար՝**

**Մ. Ս. Հովհաննիսյան**

**27.05.2015 թ.**

**Կ. Տ.**